48

ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆ

Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր

Կյանքի ամենամեծ սերը...



1-ին ժամ. Սա իմ տունն է

Ես սովորել եմ այս նույն բուհում, որն այն ժամանակ կոչվում էր Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ: 1979 թվականից սկսեցի դասավանդել նույն ինստիտուտում, արժանացել եմ դոցենտի, ապա նաեւ պրոֆեսորի կոչման: Եղել եմ Հայաստանի նկարիչների միության գեղանկարչության բաժնի վարիչ: 1997-ից հանդիսացել եմ Գեղարվեստա-թատերական ակադեմիայի պրոռեկտոր: Նույն թվականին դարձել եմ Գեղարվեստի պետական ինստիտուտի ռեկտոր: Սա իսկապես իմ տունն է, որտեղ սովորել եմ եւ խնդիրները դեռեւս ուսանող ժամանակ էի տեսնում: Ես գեղանկարիչ եմ, մասնակցել եմ բազմաթիվ ցուցահանդեսների, այդ թվում՝ նաեւ միջազգային, իմ նկարները գտնվում են Երեւանի ազգային պատկերասրահում, ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում եւ այլն: Վերջերս Փարիզում ունեցա իմ անհատական ցուցահանդեսը, հիմա էլ պատրաստվում եմ նոր ցուցահանդեսի: Իհարկե, այս ամենը միաժամանակ հասցնելը դժվար է եւ պետք է շատ աշխատել, բայց ես այնպես եմ դասավորում իմ կյանքը, որ ռեկտորական աշխատանքը չի տուժում, ես իմ աշխատանքը թերի չեմ անում:

Ընդմիջում. Առանց սիրելու ոչինչ չի լինի: Մարդ պետք է սիրի իր գործը, իր հայրենիքը, իր ընտանիքը եւ այլն: Դա ամենակարեւորն է:

2-րդ ժամ. Առանց մարզվելու՝ մարզիկ

Ես այն մարդկանցից չեմ, որոնք ասում են՝ երիտասարդությունը վատն է, բայց նրանք ունեն հատկանիշներ, որոնք ինձ դուր չեն գալիս, օրինակ՝ չեն կարդում: Ճիշտ է, հիմա թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ ռադիոյով, թե՛ ինտերնետով նրանք մեծ քանակությամբ ինֆորմացիա են ստանում: Ոմանք էլ հնարավորություն ունեն մեկնել արտասահման (մեր ինստիտուտից այս տարիների ընթացքում 200-ից ավելի ուսանող, մեծ մասամբ մեր հովանավորությամբ, մեկնել է արտասահման) եւ անձամբ ստանալ ինֆորմացիա:

Իտալիա... թանգարաններ... նկարներ... վերածնունդ... ժամանակակից արվեստ եւ այլն. այս ամենը նրանք հնարավորություն ունեն իրենց աչքերով տեսնել, իսկ մենք այդ բացը լրացնում էինք գրքերի միջոցով:

Ամեն դեպքում, ես կուզենայի, որ կարդային, քանի որ ընթերցանությունը շատ կարեւոր է մարդու ընդհանուր զարգացման համար: Այն, ինչ դու կարդում ես, կարող ես պատկերացնել, իսկ հեռուստատեսությամբ ուրիշի պատկերացումներն են քեզ հրամցնում, եւ այն մեռնում է: Կարծում եմ՝ հեռուստատեսությունը մարդկանց մի քիչ դմբոյացնում է: Ասենք՝ ուզենաս մարզիկ դառնալ, բայց ինքդ չմարզվես, այլ նայես, թե ուրիշներն ինչպես են մարզվում:

Երկար ընդմիջում. Ամեն ինչ հումոր է մեր կյանքում: Հումոր չէ՞. մեր շենքի մոտ կա չորս բակ, բայց աղբարկղները բերել եւ դրել են Գեղարվեստի ակադեմիայի հենց մուտքի դիմաց՝ մտածելով, որ դա ամենահարմար տեղն է: Պարզվեց նաեւ, որ նմանատիպ հարցերը մեզ մոտ շատ դժվար են հարթվում. երկու շաբաթ է՝ պայքարում եմ, որ աղբարկղները տանեն մուտքի մոտից: Հումոր է, ճի՞շտ է, մի փոքր տխուր, բայց հումոր է:

3-րդ ժամ. Միշտ առաջից ենք գնացել

Մի քանի տարի առաջ մենք բազում խնդիրներ ունեինք. շենքը քանդուքարափ էր, նյութատեխնիկական բազան հասցված էր զրոյի, բայց հիմա վերելք ենք ապրում: Մեր ուսանողների քանակը կրկնապատկվել է, նոր բաժիններ, նոր ֆակուլտետներ, նոր լաբորատորիաներ ենք բացել, պատկերասրահ ենք կառուցել, որն արդեն աշխատում է 2,5 տարի եւ բազում հիանալի ցուցահանդեսներ ենք ունեցել: Գյումրիում եւ Դիլիջանում ունենք մասնաճյուղ: Դիլիջանի մասնաճյուղը օգտագործում ենք նաեւ որպես պրակտիկայի համար նախատեսված վայր, ուր գնում են եւ Երեւանի ուսանողները, եւ գյումրեցիները՝ աշխատելու եւ միաժամանակ հանգստանալու: Կառուցում ենք նաեւ թանգարան, շուտով կկայանա նոր գրադարանի բացումը: Այսինքն՝ Գեղարվեստի ակադեմիան այս տարիների ընթացքում միշտ շինարարության մեջ է եղել, եւ հիմա էլ շինարարությունը շարունակվում է: Մենք միշտ առաջից ենք գնացել եւ այդպես էլ պետք է լիներ, որովհետեւ մեր դասախոսների որակը շատ բարձր է եղել. Հայաստանի ամենահայտնի մասնագետներն են դասավանդում մեզ մոտ: Գեղարվեստի ակադեմիայի հիմնական խնդիրը պրոֆեսիոնալ բարձր մակարդակի ուսուցումն է: Այո, մեր ուսուցման ձեւի մեջ էլ կան ակադեմիական տարրեր: Մենք ժամանակին համընթաց ենք, մեզ մոտ կան բոլոր նորությունները, օրինակ, երկու տարի է՝ ընդունելություն ենք անում համակարգչային նախագծի բաժնում, որ ամենաժամանակակից բաժինն է:

Ընդմիջում. Մեր աղջիկները շատ են գեղեցկացել, երանի մեր ժամանակ այսքան գեղեցիկ աղջիկներ լինեին:

4-րդ ժամ. Արվեստանոցում մենակ ես

Իմ կյանքի ամենաերջանիկ տարիները եղել են ուսանողական տարիները: Իսկապես, դա մի երջանիկ ժամանակաշրջան էր: Ես զբաղվում էի գեղանկարչությամբ, որն իմ կյանքի ամենամեծ սերն է, դարդուցավ, տունուտեղ չունեի, միշտ ընկերներիս հետ էի:

Արվեստի բնագավառի ուսանողների համար այն հանգամանքը, որ ընկերներիդ հետ ես աշխատում, շատ կարեւոր է, որովհետեւ հետո ամբողջ կյանքդ մենակ ես լինում արվեստանոցում:

Ընդմիջում. Աստծո կողմից ինչ տաղանդ էլ քեզ տրված լինի, առանց աշխատանքի դու ոչնչի չես հասնի:

5-րդ ժամ. Սիրելի՛ դիմորդներ, լավ մտածեք, արդյոք դա ձե՞ր որոշումն է, թե՝ ձեր ծնողների: Կան երիտասարդներ, որ ընդունվում են մեզ մոտ՝ բանակից խուսափելու կամ լավ ժամանակ անցկացնելու համար: Պետք է գիտակցել, որ այս հեշտ թվացող ճանապարհը իրականում շատ բարդ է եւ մաքառումների ուղի է՝ միաժամանակ գեղեցիկ եւ հետաքրքիր: Ինձ համար արվեստով զբաղվելը բարձրագույն հաճույք է: Կցանկանայի, որ շատ լուրջ վերաբերվեիք այս գործին:

Ավարտողներին կասեի՝ թող չմեծամտանան: Մի համեմատվեք միջակությունների հետ, ընտրեք բարձր չափանիշներ եւ հասեք դրանց, թե չէ միջակ արվեստագետներ շատ կան եւ ավելին մեզ պետք չէ:

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ